

կողին Քրիստոսի զմեռելութիւն մարմնոյն
նշանակէր. եւ արիւն զի՞նչ նշանակէր. քե
ասես զկենդանութիւն անմարմին աստուա-
ծութեան. նա՛ անմարմին աստուածութիւն
ոչ ունի արիւն, այլ մարմին եր կենդանի.
որպէս վերոյ ասաց. որպէս ասէ. Մերով
բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոս-
տովանի. զայդ հերձուածն ոչ ընդունէ ի
դաւանութիւն Նիկիայի. զի ասէ միայն զայս
քե՛ Զարչարեալ, խաչեալ, քաղեալ, յերրորդ
աւուր յարուցեալ, եւ Ներսէս ասէ. Խա-
չեցար քաղեցար եւ յարեար: Եւ քե կամիս
զղորս չար հերձուածն իմանաս, զնա եւ սես
ի Հայոց հզօր փիլիսոփայի Սիւնեցի Առաքելի
դաւանութիւնսն, ի բազում տեղիս, քե որ-
չափ նզովս արձակէ զկնի այնպիսի դաւա-
նողացն: Նախ ի լուծմունս Սահմանացն
Դաւթի ի յայնմ տեղւոջն որ զերկրորդ սան-
մանսն Իմաստասիրութեան բացայայտ է, քե
Իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայ-
նոց եւ մարդկայնոց իրողութեանց: Եւ դար-
ձեալ սես ի Լուծմունս քերականին ի վանգի
եւ ի փաղառութեանց մեկնութիւնսն:

Եւ քե ասեմ ի բազում տեղիս տեսնեմք
գրեալ զայսպիսիս ի գիրս Հայոց եւ ի հին
գրեանս, իմացիք. քեպէտ բազում անգամ
սրբեցին սուրբ հարքն, ոչ գոյ գիրք Հայոց,
Քր ոչ երեւի որոմն ինչ ի Քաղկեդոնակա-